

## ՄԵՐ ՈՒՒՏԸ

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս, Ու զընուն եմք մեր ճամփով, Մըրիկներով պատած անհույս, Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր, Սուր ենք տեսել ու կըրակ, Մեր ճակատը դեմ ենք արել Մըրիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ Մեր դըրոշը սըրբազան, Ու մենք չունենք տեղ ու դադար՝ Երկրից երկիր ցիրուցան:

Բայց զընուն ենք մենք անվեհեր Ձարկերի տակ չար բախտի, Մեր աչքերը միշտ դեպի վեր՝ Դեպի լույսը մեր ուխտի:

1902

\*\*\*

Հիմ աշխարհը ամեն օր  
Հազար մարդ է մըտնում մոր,  
Հազար տարվան փորձն ու գործ  
Ըսկըսվում է ամեն օր:

## Հովհաննես Թումանյանի 150-ամյակին ընդառաջ



\*\*\*

Ձուր եմ փախչում, ինձ խաբում,  
Հազար կապ է ինձ կապում.  
Ամենքի հետ ապրում եմ,  
Ամենքի չափ տառապում:

\*\*\*

Հոգիս՝ տանը հաստատվել-  
Տիեզերքն է ողջ պատել.  
Տիեզերքի տերն եմ ես,  
Ո՞վ է արդյոք նըկատել:

\*\*\*

Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ,  
Քանի՜ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.  
Ի՛նչ եմ տարել նըրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,  
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

\*\*\*

Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր.  
Ես լըսում եմ Նըրա անլուռ կանչն ու հույսը ամենուր.  
Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին  
Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունջը ամենուր:

\*\*\*

Ամեն անգամ Քո տըվածից երբ մի բան ես Դու տանում,  
Ամեն անգամ, երբ մայրում եմ, թե ինչքա՛ն է դեռ մնում,-  
Ձարմանում եմ, թե՛ ո՞վ Շըռայլ, ինչքա՛ն շատ ես տվել ինձ,  
Ինչքա՛ն շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանամք մենք մորից:

\*\*\*

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան  
Հազար տարում հազիվ դառավ Մարդասպան,  
Ձեռքերն արնոտ գնում է մա դեռ կամկար  
Եվ հեռու է Մարդը տանող իր ճափան:

## ՀՀ ԳԱՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊԱՏԿԱՌՆԵԼԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ

(ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄԿԱԿԻ ԱՌԹԻՎ)

Անցյալի պատմությունը մի լուսավոր լույսեր է,  
որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա  
իր ճանփին անմոռ զնալու համար:

Հովհ. Թումանյան

1943 թ. նոյեմբերի 10-ին ԽՍՀՄ կառավարության որոշմամբ և ՀԽՍՀ ժողովրդի հրամանով ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիման վրա ստեղծվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան, իսկ նրա կազմում սակավաթիվ ինստիտուտների շարքում հիմնվեց նաև պատմության ինստիտուտը:

Ինստիտուտի տնօրեններն են եղել միջազգային ճանաչում, ծանրակշիռ վաստակ, ինչպես նաև գիտակազմակերպչական կարողություններ ունեցող անվանի մտավորականներ, որոնց հմուտ ղեկավարության շնորհիվ պատմության ինստիտուտը ոչ միայն կայացել է որպես հիմնարար հայագիտական հիմնարկ՝ համալրվելով կարող ու գիտակ մասնագետներով, այլ նաև ծնունդ է տվել ակադեմիական մոր հիմնարկների, որոնք մինչ այդ նույն ինստիտուտի կազմում սեկտորի կարգավիճակում էին (փիլիսոփայության և արվեստի պատմության՝ 1947 թ., արևելագիտության՝ 1957 թ., հնագիտության և ազգագրության՝ 1959 թ.): Պատմության ինստիտուտը նաև եղել է մնում է հանրապետության ԲՈՒՀ-երի և գիտահետազոտական հիմնարկների համար պատմաբան-մասնագետ պատրաստող յուրօրինակ դարբնոց:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեններ են եղել ակադեմիկոսներ՝ Հովսեփ Օրբելին (1943-1947 թթ.), Աբգար Հովհաննիսյանը (1947-1953 թթ.), Սուրեն Երենյանը (1953-1959 թթ.), Արամայիս Հարությունյանը (Արմո Հարենց) (1959-1963 թթ.), Գալուստ Գալոյանը (1963-

1979 թթ.), Հրանտ Ավետիսյանը (1979-2002 թթ.): 2002 թվականից ինստիտուտի տնօրենն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ. գ. դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը:

2018 թ. դեկտեմբերի 26-27-ին տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 75-ամյակին նվիրված հրեյաճառական միջոցառումները:

Երկու օրերի ընթացքում անցկացվեց երիտասարդ գիտաշխատողների 39-րդ նստաշրջանը (խորհրդի նախագահ՝ պ. գ. թ., դոցենտ Համո Սուքիասյան), ինչը ևս պատմության ինստիտուտի լավագույն ավանդույթների շարունակականության առիավատյան է: Ձեկնուցումներով հանդես եկան 18 երիտասարդ գիտաշխատողներ և ասպիրանտներ պատմության ինստիտուտից և հանրապետության գիտակրթական այլ հաստատություններից (Երևանի պետական համալսարան, Հայաստանի ազգային արխիվ, Հայաստանի ազգային գրադարան, գիտակրթական միջազգային կենտրոն): Ձեկնուցումներում անդրադարձ եղավ Հայաստանի հին, միջնադարյան, մոր և նորագույն շրջանի պատմագիտության ամենատարբեր հիմնահարցերին:

2018 թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի դահլիճում տեղի ունեցավ ինստիտուտի 75-ամյա հրեյաճառին նվիրված հանդիսավոր միստո, որին մասնակցում էին Հայաստանի գիտակրթական, պատմաշակութային, պետական և այլ հիմնարկների ղեկավարներ, գիտնականների տարբեր սերնդի ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ. գ. դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը: Նա պատմական ուրվագծով ներկայացրեց հայ պատմագիտական մտքի զարգացման անցած ուղին սկսած XIX դ.-ից մինչև մեր օրերը՝ հատկապես կարևորելով խորհրդային ժամանակաշրջանը, երբ ստեղծվեց հայ պատմագիտական հզոր դպրոցը, հրատարակվեցին բազմաթիվ հիմնարար աշխատություններ, աղբյուրագիտական և սկզբնաղբյուրային ժողովածուներ, հայ ժողովրդի պատմության բազմահատորյակը և այլն: Ա. Մելքոնյանն առանձնապես շեշտեց պատմաբանի պատասխանատու առաքելության՝ անաչառ և օբյեկտիվ լինելու անհրաժեշտության մասին, որը հայ պատմագիտական դպրոցի շարունակականության պահպանման գրավականն է: Պատմագիտությունը նաև գիտաճանաչողական նշանակություն ունի հայրենասեր քաղաքացի ձևավորելու առումով:

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը գովեստով արտահայտվեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի անուրանալի ձեռքբերումներին պատմագիտության և ընդհանրապես հայագիտության զարգացման ասպարեզում, միջազգային գիտական ոլորտում դրանք ներկայացնելու, պատմաբանների նորանոր սերունդներ աճեցնելու կարողության, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության հետ ինստիտուտի սերտ գործակցությունը պատմաճանաչողական և հայրենասիրական դասախոսություններ իրականացնելու կարևորության

և այլնի մասին: Յ. Սուվարյանը փոխանցեց նաև ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի շնորհավորանքները՝ նշելով, որ նա ինստիտուտին է նվիրել համակարգչային համապատասխան տեխնիկա և սարքավորումներ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 75-ամյակի առթիվ շնորհավորանքի խոսքով հանդես եկավ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը և ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանին շնորհեց ԵՊՀ «Ոսկե մեդալ» գիտակազմակերպչական ոլորտում ունեցած վաստակի համար:

Ելույթ ունեցան նաև Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանի տնօրեն, պ. գ. դ. Վահան Տեր-Ղևոնդյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆեսոր Էդիկ Միմասյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. թ., դոցենտ Ռոբերտ Ղազարյանը, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ. Վարդան Դևրիկյանը, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս, սոց. գ. դ. Գևորգ Պողոսյանը:

Միջոցառմանը ներկա էին նաև ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակիցներ՝ փոխնախարար Դավիթ Սարգսյանը, որը փոխանցեց նախարարի պաշտոնակատար Մխիթար Հայրապետյանի ողջույնի ուղերձը, ինչպես նաև Հայրենադարձության և հետազոտությունների վարչության պետ Գրիգոր Արշակյանը, Հայրենադարձության բաժնի պետ, պ. գ. թ., դոցենտ Հովհաննես Ալեքսանյանը: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը >2



ունկնդրին այն, ինչն անհնար է ֆիքսել նոտաներով: Կապելլայի կատարմամբ հնչում են ոչ միայն տեքստը, այլև ենթատեքստը, ոչ միայն տողերը, այլև այն, ինչ գտնվում է տողերի միջև, տողից վերև ու տողատակին:

Կապելլայի գլխավոր դիրիժոր և զեղարվեստական ղեկավար Յովհաննես Չեքիջյանը խիստ ինքնատիպ, օժտված երաժիշտ է: Յ. Չեքիջյանը կայծակի արագությամբ է արձագանքում երգչախմբի այս կամ այն մասում նկատվող ամենափոքր տատանումին կամ հնչերանգին: Չեքիջյանի ղեկավարությամբ խումբը հիշեցնում է սնդիկով լեցուն սրվակ, որն անդրադարձնում է դույզն իսկ շեղումը: Յուրաքանչյուր ակնթարթ դիրիժորը պատրաստ է երգչախմբի ղեկավարման վահանակին միացնել նորա-նոր նրբերանգներ. այդ ամենը կատարվում է էլեկտրոնային վիրտուոզությամբ:

...Ուղեծիր է ելել երաժշտական նոր նավ, որի անձնակազմը և հրամանատարը եռանդուն են, լի ավյունով և խիզախ թռիչքներով»:

Իսկ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Լենինյան և ՍՍՀՄ Պետական մրցանակների դափնեկիր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, արվեստագիտության դոկտոր Արամ Խաչատրյանն արձանագրեց. «Շատ բարձր են գնահատում Յովհաննես Չեքիջյանի կատարած աշխատանքը: Նա համաշխարհային ընդգրկման դիրիժոր է, խմբերգային արվեստը հասցրել է համամարդկային հնչեղության»:

Յ. Չեքիջյանի ղեկավարած երգչախումբը միակն է հա-

ինչպես հայ դասականների՝ Տիգրան Զուխաճյանի, Կոմիտասի, Մակար Եկմալյանի, Արմեն Տիգրանյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Արամ Խաչատրյանի և ուրիշների, այնպես էլ ժամանակակից և սփյուռքահայ կոմպոզիտորների՝ Բարսեղ Կանաչյանի, Աննո Բաբաջանյանի, Ալեքսանդր Զարուբյունյանի, Ալան Յովհաննեսի, Էդվարդ Միրզոյանի, Էդգար Յովհաննիսյանի, Գրիգոր Յախինյանի, Արամ Սաթյանի, Կոնստանտին Պետրոսյանի, Աշոտ Բաբայանի և այլոց ստեղծագործությունները:

Մասնատրոն համերգներով շրջագայել է Հայաստանի սահմաններից դուրս 184 քաղաքներում՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, Լիբանանում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Սիրիայում, Շվեյցարիայում, Թուրքիայում, Արգենտինայում, Ավստրալիայում ևն: 868 համերգների ընթացքում (դրանցից 43-ը՝ Ֆրանսիայում, 97-ը՝ Լենինգրադում) հանդես է եկել աշխարհի 69 առաջնակարգ նվագախմբերի հետ:

Մյուս կողմից՝ հայրենիքում՝ Երևանում և Հայաստանի շրջկենտրոններում ու շրջաններում ներկայացրել է ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան դասական երաժշտությունը, այդ թվում՝ Բախի, Յենդելի, Մոցարտի, Բեթովենի, Շոպենի, Բելինիի, Ռոսինիի, Վերդիի, Վագների, Մենդելսոնի, Բրամսի, Բեռլիոզի, Գունդի, Ֆորեի, Սմետանայի, Գերշվինի, Գլինկայի, Բորոդինի, Մուսորգսկու, Չայկովսկու, Տանեևի, Դմիտրի Շոստակովիչի, Տիխոն Խրեննիկովի, Գեորգի Սվիրիդովի, Դմիտրի Կաբալևսկու, Ռոդիոն Շչեդրինի, Քեշիշուֆ Պենդերեցկու և

այլոց ստեղծագործությունները:

Ընդ որում՝ երկու դեպքում էլ Մասնատրոն դառնում է բազմաթիվ ստեղծագործությունների առաջին ու անգերազանցելի մեկնաբանը: Նրա ղեկավարությամբ հայկական կապելլան ստեղծել է բազմազան ու հարուստ երկացանկ՝ կատարելով համաշխարհային երաժշտական գրականության ճանաչված, հայ և օտարազգի կոմպոզիտորների ստեղծագործություններից, նաև հայ ժողովրդական երգեր, հատվածներ օպերաներից: Բնագրի լեզվով՝ 27 լեզուներով կատարվել են ավելի քան 700, այդ թվում՝ խոշոր կտավի շուրջ 40 ստեղծագործություններ, որոնցից 15-ը՝ ներկայացվել են Խորհրդային Միությունում առաջին անգամ:

Յ. Չեքիջյանի ջանքերով ոչ միայն Հայաստանում, այլև Խորհրդային Միությունում առաջին անգամ հնչել են վոկալ-սիմֆոնիկ այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են Յ. Բեռլիոզի «Requiem»-ը (1967, Երևան, Մոսկվա), «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկ սիմֆոնիան (1983, Մոսկվա) և «Te Deum»-ը (1977, Լենինգրադ), Գ. Ֆորեի «Requiem»-ը (1971, Երևան, Մոսկվա), Շ. Գունդի «Մահ և կյանք» օրատորիան (1971, Մոսկվա), Ջ. Վերդիի «Ազգերի հիմներ» (1982, Լենինգրադ), Կ. Լամբերտի «Ռիո Գրանդե»-ն (1982, Լենինգրադ) ևն:

Ավելին՝ Յ. Չեքիջյանը համաշխարհային դիրիժորական արվեստիկայում միակ դիրիժորն է, ով Յ. Բեռլիոզի «Requiem»-ը կատարել է 37 անգամ՝ Երևանում, Մոսկվայում, Լենինգրադում, Մինսկում, Թբիլիսիում, Վիլնյուսում, Կիևում, Քիշնևում, Կաունասում, Ուլյանովսկում, Տիրասպոլում, Խարկովում, Դնեպրոպետրովսկում, Սվերդլովսկում, Լվովում, Օդեսայում, Նովոսիբիրսկում, Օմսկում, Տոմսկում, սահմանելով յուրահատուկ համաշխարհային ռեկորդ:

Կարելի է հաստատապես արձանագրել, որ Յովհաննես Չեքիջյանի անձնական մասնակցության շնորհիվ նոր մակարդակի է բարձրացել երաժշտական կյանքի որակը Հայաստանում: Իր գործունեությամբ նա էական նպաստ է բերել նաև Խորհրդային Միությունում խմբերգային և դիրիժորական կատարողական արվեստի զարգացմանը: Դրա վառ վկայությունն է այն հանգամանքը, որ կատարողական բարձր արվեստի և ստեղծագործական ծանրակշիռ նվաճումների համար Հայաստանի պետական երգչախումբը 1969 թվականին արժանացել է «Ակադեմիական» բարձր, սակավադեպ շնորհվող կոչմանը, որին Հայաստանի երաժշտական կոլեկտիվներից արժանացել է միայն Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը: 1975-ին Կապելլան դարձել է Հայաստանի վաստակավոր կոլեկտիվ, իսկ 2012-ին ստացել «Ազգային» կարգավիճակ:

Իր գործունեությամբ Յ. Չեքիջյանը նշանակալիորեն ընդլայնել է երգչախմբային ստեղծագործության հորիզոնները և հայ երաժշտության ժառանգությունը միավորել համաշխարհային և ժամանակակից խմբերգային արվեստի լավագույն նմուշների հետ:

Յ. Չեքիջյանը հայ դիրիժորներից, նաև՝ կատարողներից միակն է, ով արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի: ԽՍՀՄ այդ բարձրագույն պարգևը տաղանդավոր երաժշտին շնորհվեց 1975 թվականին՝ «1971-

3

## ԿԵՆԴՐԱՆԻ ԼԵԳԵՆԴԻՆ ՈՒ ՔԱՅԼՈՂ ԴԱՍԱԿԱՆԸ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻԶՅԱՆ

**Լրացան ԸՇ ԳԱԱ պատվավոր դոկտոր, ԸՇ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, ԸՇ ազգային հերոս, Խորհրդային Միության ժողովրդական արտիստ, Խորհրդային Միության Պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր, դիրիժոր Յովհաննես Հարությունի Չեքիջյանի ծննդյան 90-ամյա և կատարողական գործունեության 75-ամյա հոբելյանները:**

Այդ կապակցությամբ 2018 թվականի հոկտեմբերին ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ Յ. Չեքիջյանը՝ հայ երաժիշտներից միակը, արժանացավ ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչման. վկայականը Մասնատրոնի հանձնեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը 2018թ. հոկտեմբերի 18-ին:

2017 թվականի վերջին՝ դեկտեմբերի 30-ին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Յովհաննես Չեքիջյանին շնորհվեց «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչումը: Նախագահի հրամանագրում կարդում ենք. «Հայաստանն աշխարհին ներկայացնելու ազգանվեր գործում դրսևորած անմնացորդ նվիրումի, մշակույթի բնագավառում ներդրած անձնական մեծ ավանդի, ինչպես նաև հայ ժողովրդին մատուցած բացառիկ ծառայությունների համար ժողովրդական արտիստ Յովհաննես Հարությունի Չեքիջյանին շնորհել «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչում՝ հանձնելով Հայրենիքի շքանշան»:

Յ. Չեքիջյանը՝ մեծանուն երաժիշտը, քաղաքացին ու անհատը, հայրենիքի բարձրագույն պարգևին՝ Հայաստանի ազգային հերոսի կոչմանն արժանացած 16-րդ հայրդին է և երկրորդ երաժիշտը, ներկայումս երևանաբնակ, հայաստանաբնակ միակ ՀՀ ազգային հերոսը:

Եվ այսպես՝ ո՞վ է մեր ժամանակների հերոսը՝ կենդանի լեգենդ ու քայլող դասականը, մասնատրոն Յովհաննես Չեքիջյանը:

Փարիզի «Ecole normale de Musique» կոնսերվատորիայի և Ստամբուլի կոնսերվատորիայի ասպիրանտուրայի շրջանավարտ, Թուրքիայի միակ պրոֆեսիոնալ երգչախմբի՝ Ստամբուլի պետական կապելլայի զեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, Ստամբուլի պետական օպերային թատրոնի երաժշտական ղեկավար Յ. Չեքիջյանը 1961 թվականին եկավ հայրենիք և սեպտեմբերի 5-ին ստանձնեց Հայաստանի պետական երգչախմբի ղեկավարությունը: Նրա գործունեությունը նշանավորեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի տարեգրության Ոսկեդարը, երբ հայկական Կապելլան հասավ Խորհրդային Միության լավագույն երգչախմբերի մակարդակին՝ որոշ առումներով գերազանցելով նրանց:

Երգչախմբային դիրիժոր, կոմպոզիտոր, մանկավարժ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, Լենինյան և ՍՍՀՄ Պետական մրցանակների կրկնակի դափնեկիր Գուստավ Էռնեստսը նկատեց. ««Էստոնիա» համերգարանի այցելուներին սպասում էր հաճելի անակնկալ, ես կասեի՝ «համերգային ռումբ»՝ Հայաստանի պետական երգչախմբի ելույթը: Ինտոնացիոն հարստությունը, ֆրագավորման հստակությունը հնարավորություն են ընձեռում հաղորդել



մաշխարհային երգչախմբային արվեստում, որը բեմում երգում է առանց նոտաների, դրանցից չի օգտվում անգամ խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարման ժամանակ՝ ղեկավարվելով «բեմ բարձրացողը նոտաներն իր սրտում ու մտքում պետք է ունենա և ոչ թե ձեռքին» չեքիջյանական նշանաբանով:

Խորապես ինքնատիպ ու բացառիկ դիրիժորի կատարողական գործունեությունն ունի երկու հիմնական ուղղություն:

Մի կողմից՝ նա աշխարհին է ներկայացրել հայ երգչախմբային երաժշտությունը և երգչախմբային արվեստի բարձր մակարդակը: Այս տեսակետից Մասնատրոն հաջողությամբ շարունակում է Մեծն Կոմիտասի գործը: Կոմիտասը հայ երաժշտության պատգամախոսն էր՝ հայ երգի առաջյալն ինչպես օտարների, այնպես էլ հենց հայերի համար: Նրա կյանքի նպատակներից էր համոզել աշխարհին, որ հայն ունի իր ինքնուրույն երաժշտությունը: Կոմիտասը հայ երգը տարածեց նաև հայերի շրջանում և «ստիպեց» նրանց, որ սիրեն այն: Նա իր ժողովրդին վերադարձրեց սեփական երգը:

Իր կատարողական ողջ գործունեության ընթացքում Մասնատրոն Չեքիջյանը հավատարիմ է կոմիտասյան պատգամներին: Եվ պատահական չէ, որ 2015 թվականի հունվարի 29-ից՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հիմնադրման օրվանից, Մասնատրոն այդ հաստատության գիտական խորհրդի անդամ է: Ավելին՝ կանգնած լինելով թանգարանի ստեղծման գաղափարի և իրականացման ակունքներում՝ մեծապես կարևորել է թանգարանի դերը Երևանում և առհասարակ մեր գիտամշակութային կյանքում: Իսկ մինչ այդ՝ 2011 թվականին եղել է Կոմիտասի անվան Առաջին միջազգային փառատոնի պատվավոր հյուրը, ընտրվել մրցանակային ժյուրիի պատվո նախագահ ու փառատոնի «զեղարվեստական մասի ձևավորման գործին աջակցելու և վերջինիս նկատմամբ նվիրվածություն ցուցաբերելու համար» 2011թ. օգոստոսի 7-ին պարգևատրվել պատվոգրով:

Յ. Չեքիջյանի երկացանկում կարևոր տեղ են գտել

## ԼԻՄԱ ԽԱՉԻԿՅԱՆ

**Բազմալստակ և գործիմաց հրատարակիչ Լիմա Խաչիկյանը ՀՀ ԳԱԱ համակարգի բազմաթիվ աշխատողներին քաջածանոթ անհատականություն էր, ով իր կյանքի հիսուն տարիներն անմնացորդ նվիրեց ակադեմիական գրահրատարակության զարգացման գործին: Կյանքով և աշխատանքային եռանդով լի, կանացի մեծ հմայքով օժտված մեր գործընկերը բոլորիս համար շատ անսպասելի հրաժեշտ տվեց կյանքին 2018 թ. դեկտեմբերի 24-ին:**



Լիմա Անդրանիկի Խաչիկյանը ծնվել է 1941 թ. դեկտեմբերի 12-ին Երևանում: Ավարտել է Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը:

1968 թ. աշխատանքի է անցել Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունում: Սկզբում աշխատել է որպես գործավար, այնուհետև թողարկիչ, խմբագիր, բաժնի վարիչ: 1990 թ. Լ. Խաչիկյանը նշանակվել է հրատարակչության արտադրության գծով փոխտնօրեն: 2000թ. մինչև կյանքի վերջը ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտադրական ՊԲԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալն էր:

Ծանրակշիռ է Լ. Խաչիկյանի ներդրումը ակադեմիական գիտական գրականության և պարբերականների հրատարակության գործում: Նրա գործում մասնակցությամբ տպագրվել են հարյուրավոր գիտական արժեքավոր աշխատություններ և հայ դասականների երկերի ժողովածուներ: Իբրև հմուտ մասնագետ՝ նա կարողացել է ժամանակին և համարժեք լուծումներ տալ իրեն վստահված արտադրական ոլորտի առջև ծառացած խնդիրներին: Զգալի էր նրա ներդրումը հատկապես 90-ականների ծանր տարիներին տպագրական նյութերի հայթայթման և գրքերի բարձրորակ տպագրությունն ապահովելու աշխատանքներում: Նրա երկարամյա արգասաբեր աշխատանքն ըստ արժանվույն գնահատվել է ՀՀ ԳԱԱ նախագահության «Պատվոգրով» և «Գովեստագրով», ՀՀ մշակույթի նախարարության դիպլոմներով:

Հրատարակչության նվիրյալն իր արդյունավետ գործունեության և մարդկային բարձր որակների շնորհիվ վայելում էր ոչ միայն հարգատի կոչակցի, այլև համակարգի կազմակերպչությունների աշխատակիցների սերն ու համակրանքը:

ԳԱԱ հրատարակչության, տպարանի, գիտական հանդեսների և «Գիտություն» թերթի խմբագրությունների աշխատակիցները խորապես ցավակցում են Լ. Խաչիկյանի հարազատներին ցավալի կորստի կապակցությամբ:

Անչափ բարի ու կամեցող, իր սկզբունքներին երբեք չդավաճանող, շռայլ հոգու տեր Լիմա Անդրանիկի Խաչիկյանի իշխատակը միշտ վառ կմնա մեր և նրան ծանաչողների սրտերում:

**ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտադրական ՊԲԲ ընկերություն**

## ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Հրաչյա Ասցատրյանը

ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաժամանակ ընտրվեց տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հրաչյա Ասցատրյանը (ՀՀ ԳԱԱ նախագահության դեկտեմբերի 19-ի նիստում):

Հրաչյա Ասցատրյանը ծնվել է 1976 թ.-ին Երևանում: Ավարտել է ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: 1994 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում: Մինչ տնօրենի պաշտոնում ընտրվելը նա ինստիտուտի փոխտնօրենն էր:

Հրաչյա Ասցատրյանի գիտական հետազոտությունները վերաբերում են կոմպյուտերագիտությանը, բարձր արտադրողականությամբ հաշվարկներին և տարաբաշխված համակարգերին, գիտական հաշվարկներին և ամպային տեխնոլոգիաներին: Նա շուրջ 90 գիտական հոդվածի հեղինակ է: Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել 4 ասպիրանտ:

Հրաչյա Ասցատրյանը «Արմվիստեր» բարձր արտադրողականությամբ համակարգի ստեղծման համար աշխատանքային խմբի կազմում 2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին: Երկու անգամ ընդգրկվել է Հայաստանի 100 արդյունավետ գիտնականների ցանկում:

Հրաչյա Ասցատրյանը, որպես հիմնական կատարող և աշխատանքների ղեկավար, մեծ ներդրում ունի ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի, Եվրոպական համաժողովի, Սևծովյան տնտեսական համագործակցության և այլ միջազգային նախագծերի իրականացման գործում: Դասավանդում է ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնում և Հայաստանի ամերիկյան համալսարանում:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**



## ...ԲԱՅԼՈՂ ԴԱՍԱԿԱՆԵՐ

➤ 1973 թվականների համերգային ծրագրերի համար». այդ տարիներին Մաեստրոյի ղեկավարությամբ հայկական կապելլան բազմաթիվ համերգներով հանդես էր եկել Ռուսաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում, Լիտվայում Վրաստանում և Ադրբեջանում:

Այսօր Հ.Չեքիջյանը հայաստանյան բոլոր երաժշտական միջոցառումների հանդիսատեսի կողմից խիստ ցանկալի ու շատ սպասված մասնակիցն է, հայ կոմպոզիտորների շատ-շատերի վոկալ-սիմֆոնիկ և խմբերգային ստեղծագործությունների փնտրված մեկնաբանը...

Հ.Չեքիջյանի ստեղծագործական դիմանկարն ամբողջացնելու համար նշենք նրա արդյունաշատ գործունեությունը Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, որի գեղարվեստական ղեկավարը և տնօրենն էր 1982-1987 թվականներին: Հ.Չեքիջյանը կարևորում է թատրոնի խաղացանկը. ներկայացվում է Հ.Բեռլիոզի «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկ սիմֆոնիան, Չայկովսկու «Թեմա վարիացիաներով» բալետային ներկայացումը: Բենեն բարձրանում մի կողմից՝ ժամանակակից սովետական կոմպոզիտորների երկերը՝ այդ թվում Վյաչեսլավ Գաբելիճի «Սատանայի ջրաղացը» բալետը, Ալեքսանդր Չալոբյանյանի «Սայաթ-Նովա» օպերան, մյուս կողմից՝ համաշխարհային դասականների գործերը՝ Պ.Չայկովսկու «Շեչելկունցիկ» բալետը, Պուշկինի «Բոհեմ» և «Չիո-Չիո-Սան» օպերաները, Ն.Ռիմսկի-Կորսակովի «Ռևերալ» և «Ջաբրիլ» օպերաները, Մ.Գլուկերի «Դաիսի» օպերան և այլն:

Հ.Չեքիջյան-կոմպոզիտորի գրչին են պատկանում Սիլվա Կապուտիկյանի խոսքերով գրված «Ազատության ղողանջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը (1963)՝ նվիրված Ա. Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին, և «Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը (1975)՝ գրված Վահան Տերյանի բնարական բանաստեղծությունների հիման վրա, որը հնչել է Երևանում, Լենինգրադում, Մոսկվայում, Փարիզում, ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում:

Պրոֆեսոր Հ.Չեքիջյանը 1975-ից դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որտեղ 2014-ին սահմանվել է Չեքիջյանի անվան կրթաթղթակի խմբավարական բաժնի լավագույն ուսանողի համար:

2018 թվականի աշնանը իր հիմնադրման 75-ամյակը բոլորեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան:

2018թ. հոկտեմբերի 18-ին, Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյա հոբելյանական հանդիսավոր նիստը, որի համերգային մասում փայլեց Հովհաննես Չեքիջյանը:

Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը՝ Մաեստրոյի ղեկավարությամբ նախ հանդես եկավ կոմիտասյան խմբերգերի a cappella փայլուն կատարումներով (մենակատար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Սարգիս Աղամյան)՝ «Ել-ել», «Գուրմերգ», «Կալի երգ» և երգչախումբի «Լուսնակը սարի տակին», «Անձին եկավ», «Եղնիկ», «Վարդ ա յարս», «Երևան բաղ եմ արել», «Տուն արի» և «Անձն երթամ իմ յարը»: Հաջորդիվ՝ հայկական կապելլան Մաեստրոյի ղեկավարությամբ կատարեց Տիգրան Չուխանյանի «Կարինե» կոմիկական օպերայի առաջին գործողության առաջին տեսարանը (մենակատար՝ Սարգիս Աղամյան) և եզրափակիչ խմբերգը՝ ՀՀ վաստակավոր արտիստ Արամ Թուրաբյանի դաշնամուրային նվագակցությամբ:

Այնուհետև հանդես եկավ Հովհաննես Չեքիջյան-սիմֆոնիկ դիրիժորը՝ նրա ղեկավարությամբ Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախումբը կատարեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյա պատմության ընթացքում միակ երաժիշտ ակադեմիկոսի՝ աշխարհահռչակ Արամ Խաչատրյանի

հանրահայտ Վալսը՝ 21-ամյա Մ.Յու.Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի համար գրված երաժշտությունից, որը դարձավ դրամատիկական թատրոնում խաչատրյանի ստեղծագործական գագաթնակետը: Այս առիթով նշենք, որ «Դիմակահանդեսի» պրեմիերան տեղի ունեցավ 1941-ի հունիսի 21-ին, Մոսկվայի Ե.Վախթանգովի անվան թատրոնում: Ու թեև պրեմիերայի հաջորդ օրն սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, սակայն Վալսն, այդուամենայնիվ, ապրեց ու տարածվեց աշխարհով մեկ:

Ստեղծագործության ընտրությունը խորհրդանշական էր, չէ՞ որ տասնամյակներ առաջ՝ դեռևս Հայաստանում իր կատարողական գործունեության



արշալույսին Հ.Չեքիջյանն արժանացել էր Ա.Խաչատրյանի բարձր գնահատականին: 1971թ. հուլիսի 14-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ նա պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Առաջին շնորհավորանքը հենց Արամ Խաչատրյանից էր: Հուլիսի 15-ին մեծանուն խմբավարն ստանում է հետևյալ շնորհավորական հեռագիրը. «Дорогой Оганес. Сердечно поздравляю Вас с награждением Орденом Трудового Красного знамени. Желаю еще большего расцвета Вашего сверкающего таланта. С любовью, Арам Хачатурян»:

ՀՀ ԳԱԱ հոբելյանական համերգն ավարտվեց ՀՀ ԳԱԱ օրհներգի կատարմամբ՝ Արամ Սաթյանի և Կարո

Վարդանյանի հեղինակած վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունը հնչեց Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի և Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախմբի կատարմամբ՝ իր միակ ու անկրկնելի մեկնաբանի՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ:

Այս համատեքստում կարևորվում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ Մաեստրոյի համագործակցությունը, որը նոր ու արդյունավետ փուլ է թևակոխել վերջին տասնամյակում: Նա ոչ միայն ՀՀ ԳԱԱ Ոսկե հուշամեդալի ասպետ է, ՀՀ ԳԱԱ օրհներգի առաջին ու մինչ օրս միակ մեկնաբանը, այլև ՀՀ ԳԱԱ պատմության մեջ միակ երաժիշտը, ավելին՝ արվեստի աշխարհի եզակի ներկայացուցիչը, ով արժանացել է ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչման:

Մաեստրոն երաժիշտ կատարողներից միակն է, ում ստեղծագործական գործունեությանը նվիրված գիտական նստաշրջան է գումարել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը: Նա արդեն 10 տարի անընդմեջ ոչ միայն ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է, այլև ինստիտուտի բոլոր միջոցառումների սպասված ու ցանկալի հյուրն ու մասնակիցը:

Վերստին ջերմորեն շնորհավորելով մեր թանկագին հոբելյարին՝ նրան մաղթում ենք երջանկությամբ ու ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կյանքի բազում տարիներ, անսպառ ստեղծագործական կրթով, նորանոր նվաճումներ՝ ի նպաստ հայ երգչախմբային-կատարողական արվեստի զարգացման, ի շահ հայ և համաշխարհային երաժշտության հանրահռչակման:

Շնորհավոր հոբելյանդ՝ Ամենայն հայոց մաեստրո:

Օրհնվի ծնունդդ՝ թանկագին հոբելյար:

**ԱՆՆԱ ԱՍՏՈՅՈՒՆ**

**ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր**



## «ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Հովհաննեսի Մովսեսյանի 90-ամյակի կապակցությամբ»

Դեկտեմբերի 20-ին լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտական ղեկավար, կենդանաբանության ինստիտուտի ընդհանուր հելմինթոլոգիայի և մակաբուժաբանության լաբորատորիայի վարիչ Ս. Մովսեսյանի 90-ամյակը:

Նա մակաբուժաբանության բնագավառում հայտնի և գիտության լայն շրջանակներում ճանաչված մասնագետ է: Ս. Մովսեսյանի կողմից նկարագրված են գիտության համար մի շարք նոր հելմինթների տեսակներ, կազմավորված են նոր տաքսոններ, տրվել է *Davaineata* ցեստոդների դասակարգման նոր համակարգ:

Ս. Մովսեսյանը ծնվել է 1928 թ. դեկտեմբերի 20-ին Լեռնային Դարաբաղի Մարտակերտի շրջանի Մեծ Շեն գյուղում: Գերագույն ավարտելով երևանի համամիութենական անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետը՝ 1952 թ. նա ուղեգրվել է Գորիսի շրջանի Շիմուհայր գյուղ, որտեղ աշխատել է որպես անասնաբույժ և տեղամասի վարիչ: 1955 թ. գլխավոր անասնաբուժական վարչության հրավերով նա մեկ-

նել է Մոլդովա որպես Կալարա-շի շրջանի գլխավոր անասնաբույժ: 1959թ. Ս. Մովսեսյանը ընդունվել է Մոսկվայի Կ. Ի. Սկրյաբինի անվան հելմինթոլոգիայի համամիութենական ինստիտուտի (ՀՀԻ) ասպիրանտուրա, որն ավարտել է 1962 թ. թեկնածուական թեզի պաշտպանությամբ: Անցնելով գիտական գործունեության Մոսկվայի ՀՀԻ-ում, նա սկսել է ակտիվ և բազմակողմանի ուսումնասիրել *Davaineata* ենթակարգի ժապավենաձև որդերի մեծաքանակ խումբը: 10 տարվա գիտական հետազոտություններն ավարտվեցին 1971 թ. դոկտորական թեզի պաշտպանությամբ: ՀՀԻ-ում նա ծեռք է բերել գիտական և կազմակերպչական մեծ փորձ՝ ասպիրանտից հասնելով հելմինթների ֆաունայի և սիստեմատիկայի լաբորատորիայի և հելմինթոլոգիական կենտրոնական թանգարանի վարիչի պաշտոնի:

1976 թ. Ս. Մովսեսյանը ԳԱԱ նախագահության և ակադեմիայի նախագահ Վ. Համբարձումյանի անձնական հրավերով վերադարձել է Հայաստան՝ որպես ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի տնօրեն, ղեկավարելով ինստիտուտը մինչև 2006 թվականը: Այդ տարիներին ինստիտուտում ստեղծվել են նոր ստորաբաժաններ, իսկ

թեմատիկան հարստացել է ողնաշարավոր և անողնաշար կենդանիների մի շարք նոր խմբերի կենսաբանականության ուսումնասիրությամբ: Առաջին անգամ Հայաստանում ստեղծվել է «Կենդանաբանություն», «Մակաբուժություն» և «Էկոլոգիա» մասնագիտությունների գծով թեկնածուական և դոկտորական թեզերի պաշտպանության մասնագիտական խորհուրդ, որը Ս. Մովսեսյանը նախագահել է 1976-2015 թթ.: Ս. Մովսեսյանի ջանքերի և հեղինակության շնորհիվ ամրապնդվել են ստեղծագործական կապերը ՌԴ ԳԱ առաջատար մասնագիտական գիտահետազոտական ինստիտուտների հետ, և ՀՀ ԳԱԱ-ին կից ստեղծվել է Հայաստանի հելմինթոլոգների ընկերությունը:

Իր ակտիվ, նորարարական գիտական գործունեության աշխատանքների շնորհիվ 1982 թ. Ս. Մովսեսյանը ընտրվել է ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1990 թ.՝ ԳԱԱ ակադեմիկոս: 1994 թ.՝ ԽՍՀՄ փլուզման և գիտության համար ծանր տարիներին, ՌԴ ԳԱ կենսաբանական գիտությունների բաժնի կողմից Ս. Մովսեսյանը ստանում է Մոսկվայի պարագիտոլոգիայի ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալի պաշտոնի հրավեր: Դժվար էր լքել 30 տարվա ղեկավարած անձնակազմը, բայց հարցի լուծմանը օգնեց ՀՀ ԳԱԱ ղեկավարությունը, որն առաջարկեց միաժամանակ շարունակել աշխատանքը նաև ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում:

ՌԴ ԳԱ պարագիտոլոգիայի ինստիտուտի փոխտնօրենի պաշտոնավարման ժամանակ ինստիտուտում ստեղծվեց փորձարարական պարագիտոլոգիայի լաբորատորիա, որի ղե-

կավար նշանակվեց հենց ինքը: Այդ տարիներին Հայաստանի հելմինթոլոգներն ու պարագիտոլոգները ստացան Մոսկվայում վերապատրաստում և դոկտորանտուրա անցնելու հնարավորություն: Ս. Մովսեսյանի ջանքերի շնորհիվ Ռուսաստանի և Հայաստանի ակադեմիաների միջև կապերը վերականգնելու նպատակով 1996 թ. հետխորհրդային շրջանում ստեղծվեց առաջին համատեղ միջակայեմիական կառույց՝ ՌԴ ԳԱ պարագիտոլոգիայի և ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտների համատեղ գիտափորձարարական կենտրոնը: Այժմ այն գործում է ՀՀ ԳԱԱ ԿՀԵԿԿ կենդանաբանության ինստիտուտի և ՌԴԱ Ա. Սևերցովի անվան Էկոլոգիայի և էվոլյուցիայի պրոբլեմների ինստիտուտի պարագիտոլոգիայի կենտրոնի ներքո՝ ՌԴ ԳԱ նախագահության երկարամյակ միջազգային ծրագրերի շրջանակներում:

Ս. Մովսեսյանի գիտական գործունեությունը շատ հարուստ է և բազմակողմանի: Նրա հետազոտությունների արդյունքները արտացոլված են ավելի քան 400 գիտական հրապարակումներում, 10 հիմնարար մենագրություններում, որից երկուսը լույս են տեսել հեղինակավոր «Ցեստոդոլոգիայի հիմունքները» շարքում: Ս. Մովսեսյանի ղեկավարությամբ պաշտպանվել է 7 դոկտորական և 15 թեկնածուական ատենախոսություն: Իր ստեղծած գիտական անձնակազմը և հետազոտությունների ուղղությունը

ՌԴ-ում ճանաչվել են որպես գիտական դպրոց:

Ս. Մովսեսյանը վարում է նաև ակտիվ գիտական գործունեություն՝ աշխատանք, կատարում է բազմաթիվ պարտականություններ տարբեր գիտական կազմակերպություններում և խորհուրդներում: Նրա հաջողությունները և ձեռքբերումները, գիտական ներդրումը բարձր են գնահատվել ինչպես իր ղեկավարած անձնակազմերի, գիտական հանրության, այնպես էլ ՌԴ ԳԱ, ՀՀ ԳԱԱ ղեկավարության և Հայաստանի ու Ռուսաստանի կառավարության կողմից: Ս. Մովսեսյանը պարգևատրվել է ՌԴԱ Կ. Սկրյաբինի, Ե. Պավլովսկու, Գ. Մենդելի անվան մեդալներով, ՌԴԱ և ՀՀ ԳԱԱ պատվոգրերով, իսկ 2014 թ. նա արժանացել է ՀՀ Գիտության վաստակավոր գործչի մեդալի: Իր 90-ամյակի առթիվ նա ստացել է անձամբ ՌԴ նախագահ Վ. Պուտինի շնորհավորական ուղերձը:

Օժտված լինելով բացառիկ էներգետիկայով և ստեղծագործական ակտիվությամբ, ունենալով հիմնալի կազմակերպչական շնորհ, Ս. Մովսեսյանն այժմ էլ երիտասարդի ոգևորությամբ, հետաքրքրությամբ և եռանդով շարունակում է գիտական և գիտական գործունեությունը:

Շնորհավորելով ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Յ. Մովսեսյանի 90-ամյա հոբելյանը, նրան ցանկանում ենք երկար տարիների կյանք, առողջություն և նորանոր հաջողություններ գիտության զարգացման գործում:

**Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ՀՀ ԳԱԱ նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ**

**ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի անձնակազմ**

## Սիրիայի գիտնականների և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական հարաբերությունները նոր փուլ են մտնում

1918 թ. տարեվերջին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի Հանրապետությունում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մուհամմեդ Հաջ Իբրահիմի և սիրիացի պատգամավորների հետ, որին ներկա էին նաև արաբական երկրների գիտաշխատողներ: Պատվիրակության կազմում էին Սիրիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր, դոկտոր Նորա Արիսյանը, հայտնի վերլուծաբան, դոկտոր Աշվակ Աբբասը, Մահիր Խայաթան և Ջալալ Դարվիշը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին հայ-արաբական, այդ թվում՝ անցյալում և ներկայում հայ-սիրիական հարաբերությունները: Նշվեց, որ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում այն եզակի գիտական հաստատությունն է, որը տասնամյակներ շարունակ զբաղվել է Սիրիայի արտաքին և ներքին քաղաքական հիմնախնդիրների, նաև՝ սիրիահայ համայնքի վերլուծությամբ, ինչն ունի ինչպես



քաղաքական, այնպես էլ գիտական կարևորություն: Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը նշեց, որ արևելագիտության ինստիտուտը պատրաստ է այսուհետև ևս նպաստել հայ-սիրիական գիտական կապերի էլ ավելի զարգացմանն ու ընդլայնմանը՝ դառնալով կարևոր հարթակ

հայ-արաբական համագործակցության համար:

ՀՀ-ում Սիրիայի դեսպան Մուհամմեդ Հաջ Իբրահիմը շնչեց, որ իր երկիրը ևս պատրաստակամ է Հայաստան-Սիրիա գիտակրթական և մշակութային կապերի ընդլայնման հարցում՝ շնչեցնելով արևելագիտության ինստիտուտի դերը: Պատվի-

րակության կազմում ընդգրկված դոկտոր Աշվակ Աբբասն ընդգծեց, որ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտն արաբական աշխարհում, այդ թվում նաև Սիրիայում ունի բարձր հեղինակություն և համարվում է Մոսկվայի արևելագիտության ինստիտուտից հետո երկրորդը հետխորհրդային երկրների արևելագիտական հաստատությունների շարքում: Նա խոսեց հայ արաբագետների և Դամասկոսի ու Հալեպի համալսարանների մասնագետների միջև սերտ համագործակցության ու համատեղ գիտահետազոտական ծրագրեր իրականացնելու կարևորության մասին: Մասնավորապես կարևորվեց ցեղասպանագիտության ոլորտում երկու երկրների մասնագետների համագործակցությունը:

Ի դեպ, Սիրիայի պատգամավորները Հայաստանից վերադառնալուց հետո Սիրիայի Ազգային ժողովում զեկուցել են արևելագիտության ինստիտուտ այցի մասին, նշել են արևելագիտության ինստիտուտի՝ որպես Մերձավոր Արևելքի արդի հետազոտություններ իրականացնող ակադեմիական կենտրոնի հետ համագործակցության կարևորությունը:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**

# ...ՊԱՏԿԱՌՆԵԼԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ


➤ Կարգադրվեց ՀՀ սփյուռքի նախարարության «Ոսկե հուշանշանով», իսկ ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը՝ ՀՀ սփյուռքի նախարարության «Ոսկե մեդալով»։ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման բնագավառում ունեցած ներդրման համար ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրերով պարգևատրվեցին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. դ., պրոֆեսոր Կարեն Խաչատրյանը, նույն ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խաչատրյանը, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆեսոր Արմեն Մարությանը, Սփյուռքի և հայկական գաղթագիտության պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանը, ինչպես նաև նույն բաժնի աշխատակիցներ պ. գ. թ. Քնարիկ Ավագյանը, պ. գ. թ. Սեդա Օհանյանը, պ. գ. թ. Անի Ֆիշենկյանը, բ. գ. թ. Արծվի Բախչինյանը և գիտաշխատող Էլիզաբեթ Թադևոսյանը։

Հանդիսավոր միստին ընթերցվեցին Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի ընդհանուր պատմության ինստիտուտի գիտական ղեկավար, ԱՊՀ երկրների պատմության ինստիտուտների ընկերակցության նախագահ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ, պ. գ. դ., պրոֆեսոր Ալեքսանդր Չուբարյանի, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Ալբերտ Սարգսյանի շնորհավորական ուղերձները։

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հոբելյանի առիթով «Հայկական հանրագիտարանի» խմբագիր-տնօրեն, քի. գ. դ. Հովհաննես Այվազյանի շնորհավորական ուղերձը կարդաց և ողջույնի խոսքով հանդես եկավ Հանրագիտարանի պատասխանատու քարտուղար Հասմիկ Գրիգորյանը։

Մատու քարտուղար Հասմիկ Գրիգորյանը։ Ելույթ ունեցավ նաև Երևանի պատմության թանգարանի տնօրեն Արմինե Սարգսյանը։

Շնորհավորանքի ու գնահատանքի խոսք ասաց նաև պատմության ինստիտուտի գիտահանրամատչելի տարբեր ձեռնարկների մշտական աջակից, «Թերմոնոս-Ար» ընկերության տնօրեն, ֆ. մ. գ. թ. Խորեն Քոթանջյանը, որը նաև դրամական



պարգևներ հանձնեց Երիտասարդ գիտաշխատողների 39-րդ նստաշրջանի մասնակիցներին։

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի պատկառելի հոբելյանը նշանավորվեց «Պատմության ինստիտուտ-75» գրքի լույս ընծայմամբ, որի շնորհանդեսը նույնպես տեղի ունեցավ հանդիսավոր միստին ընթացքում։ Շուրջ 300 էջից բաղկացած սույն հատորը կազմել են պ. գ. դ., պրոֆեսոր Կարեն Խաչատրյանը (պատասխանատու խմբագիր), պ. գ. թ., դոցենտ Հակոբ Մուրադյանը, պ. գ. թ., դոցենտ Համո Սուքիասյանը։ Ներկայացնելով կատարված կոլեկտիվ աշխատանքը՝ ինստիտուտի փոխտնօրեն Կարեն Խաչատրյանը մասնավորապես նշեց, որ աշխատության մեջ արխիվային վավերագրերի, ինստիտուտի տարեկան հաշվետվությունների, փաստագրական այլ նյութերի և պատմագիտական գրականության հիման վրա ի մի է բերվել պատմության ինստիտուտի գիտական, գիտակազմակերպ-

չական և գիտակրթական գործունեությունը։ Ներկայացված են ինստիտուտի անցած ուղին, տարբեր բաժինների (Հին դարեր, Միջին դարեր, Նոր, Նորագույն, Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի, Հայկական գաղթագիտության և սփյուռքի, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության, Ընդհանուր պատմության) կատարած աշխատանքները, պատմության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդի, Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի, հրատարակչության, «Մետրոպարք. Աշխատ» գիտահրատարակչական կենտրոնի գործունեությունը, «Հայոց պատմության հարցեր» տարեգիրքը, ինչպես նաև պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի գործունեությունը։ Գրքում տեղ են գտել 1943-2018 թթ. ինստիտուտի աշխատակիցների հեղինակած մենագրությունների, կոլեկտիվ ուսումնասիրությունների, ինչպես նաև ինստիտուտի հրատարակած աշխատությունների, մատենաշարերի, փաստաթղթերի և նյութերի ժողովածուների սովորական մատենագիտությունը, նաև՝ հիշարժան լուսանկարներ։

Հոբելյանական միստին ընթացքում ցուցադրվեց 2003 թ. հեռուստալրագրող Արփեն Մովսիսյանի նկարահանած «Պատմության ինստիտուտ-60» դիտարժան ֆիլմը։

Հարազատ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտին մաղթում ենք հետագա նորանոր գիտական նվաճումներ՝ ի մասսոս հայագիտության և Հայաստանի ու հայ ժողովրդի անցյալի, ներկա-յի ու ապագայի։

**Քնարիկ ԱՎԱԳՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. թ. Համո ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոցենտ**



## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱՆԵԼ Է ԱՐԱՄ ԲԱՆԵՅԱՆԻՆ

«Արմինյն Միոր-Սփեթթերի» հաղորդմամբ Ամերիկայում ՀՀ դեսպանատանը դեկտեմբերին կայացած տարեկան ընդունելությանը որպես գլխավոր բանախոսի հրավիրվել է 1981-83 թվերին նախագահ Ռոնալդ Ռեյգանի ճառերի հեղինակ **Արամ Բախչյան** կրտսերը, որը խոսել է «Հայաստանը և հայ սփյուռքը։ Երեկ, այսօր և վաղը» թեմայի շուրջ։

«Հայաստանն ավելի երազի մեծ արստրակտ մի գոյություն էր, քան քաղաքական մի հասկացություն, ինչպես Արարատ լեռը, որն այնքան մոտիկ է թվում, բայց անհասանելի է։ Հետո, 1991-ին Ռեյգանի բնորոշմամբ «Հարիթի կայսրության» փլուզումով դարձյալ վեր հառնեց մոխիրներից։ Մյուս կողմից սփյուռքը անհավանական հաջողությունների էր հասել, հատկապես Մ. Նահանգներում, շնորհիվ եկեղեցական և քաղաքացիական, հասարակական կազմակերպությունների, ինչպիսին Ամերիկայի հայկական համագումարն է։ Հայաստան-սփյուռք կապը գոյություն ունի, բայց այդ կապը պահպանելը և սերնդե-սերունդ փոխանցելը մեր խոշորագույն մարտահրավերն է», ասել է նա, հավելելով. «Հավատացած են, որ եթե բոլոր կառույցները համապատասխան նվիրվածությամբ և ջանասիրությամբ աշխատեն, մենք կարող ենք անբակտելի եղբայրական կապեր հաստատել Հայաստանի հետ։ Մենք պետք է դրան հասնենք»։

«Ռեյգանը ամերիկացիներին ծանոթ էր որպես «մարդամոտ, հաղորդակցվող» անձնավորություն, և կարծում են նույնը կարելի է ասել Բախչյանի մասին, նշել է այդ առթիվ «Հայ Ազգային ինստիտուտի» (ANI) տնօրեն դոկտ. **Ռուբեն Աղալյանը**, ներկայացնելով Բախչյանին։

Բախչյանը Սպիտակ տանը աշխատել է երեք (Նիքսոն, Ֆորդ, Ռեյգան) նախագահների հետ, որպես նրանց ճառերը գրողի օգնական։ Ներկայիս նա «National Interest» (Ազգային շահ) հանդեսի խմբագրի տեղակալն է և կամոնավոր սյունակներ է վարում «American Conservative» պարբերականում։ «Մենք մեծապես գնահատում ենք Բախչյանի մեկնաբանությունները Հայաստանի անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ», ավելացրել է Համագումարի գործադիր տնօրեն **Բրայան Արդունին**։

## ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Շուքուրյանն ընտրվեց «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի գլխավոր խմբագիր



Նոյեմբերի 14-ի ՀՀ ԳԱԱ նախագահության միստում «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի գլխավոր խմբագիր միաձայն ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայաստանի և Երևանի գլխավոր քիթ-կոկորդ-ականջաբան Արթուր Շուքուրյանը։

Բժշկագիտության դոկտոր, Երևանի պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) պրոֆեսոր Արթուր Շուքուրյանը 2016 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ։ Նա 214-ից ավելի աշխատանքների և 1 մենագրության հեղինակ է։

Արթուր Շուքուրյանը Հայաստանի Հանրապետության Քիթ-կոկորդ-ականջաբանների ասոցիացիայի նախագահն է, «Вестник оториноларингологии» (Ռուսաստանի Դաշնության) ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ, «Քիթ-կոկորդ-ականջաբանության միջազգային հանդեսի» (Ղազախստան) խմբագրական խորհրդի անդամ։ Արթուր Շուքուրյանը «Էրեբունի» բժշկական կենտրոնի «Քիթ-կոկորդ-ականջաբանության» բաժանմունքի վարիչն է, ԵՊԲՀ-ի քիթ-կոկորդ-ականջաբանության ամբիոնի վարիչը։

Արթուր Շուքուրյանը 2001 թ.-ին արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի բժշկագիտության բնագավառում, 2004 թ.-ին արժանացել է «Վաստակավոր բժշկի» կոչման։

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**

## ՀԱՃԵԼԻ ՆՈՐՈՒՅԹ

Արցախի էներգետիկայի զարգացումը կարևոր նշանակություն ունի երկրի տնտեսության հետագա զարգացման համար։ Հայկական էներգետիկական ալտերնատիվ հիմնադրի նախագահ, էներգետիկայի բնագավառի անվանի գիտնական, տեխնիկական գիտությունների թեկնածու **Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆԸ** վերջերս որպես գիտական մենագրություն ավան-

դադրել է «Արցախի էներգետիկայի պատմությունը» աշխատությունը։ **Մենագրությունը մշտական պահպանության է հանձնված Հայաստանի ազգային արխիվում։ Վերջերս այն մշտական հանգրվանը գտավ նաև Արցախի ազգային արխիվում։ Գրքի մեկ օրինակ գտնվում է նաև Հայաստանի պատմության թանգարանում։** ➤6



Սյունիք-1 հիդրոէլեկտրակայանի շենքի արտաքին տեսքը, 2011թ. հունվար (լուսանկարը՝ Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆԻ)



հանդեպի» պատասխանատու քարտուղարի, 2003-ից՝ նաև գլխավոր խմբագրի տեղակալի պաշտոնը: 2018 թ. հունիսի 13-ին ԳԱԱ նախագահությունն Ա. Ջաքարյանին նշանակեց միջազգային համբավ ունեցող հայագիտական այս հանդեպի գլխավոր խմբագիր:

Ա. Ջաքարյանի գիտական հետազոտություններն ամփոփված են 18 մենագրությունում ու կազմած ժողովածուներում և շուրջ 220 հոդվածներում ու հրապարակումներում: Գիտության մեջ նոր ոտք դրած երիտասարդը հետազոտության բեմա ընտրեց ռուս-հայ պատմամշակութային կապերը, մասնավորապես XX դ. 10-ական թվականներին՝ մեր ժողովրդի պատմության համար բախտորոշ տարիներին: 1985 թ. նա պաշտպանեց թեկ-

լինելով պատմական ճշմարտության և հարազատ ժողովրդի ազգային շահերի նվիրյալը, Ա. Ջաքարյանը հիմնավոր փաստարկումներով մերկացնում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականությունը: Հետազոտողն իրավացիորեն նշելով այդ քաղաքականության երկդիմի բնույթը, մասնավորապես երկուդիմ ազգային-ազատագրական պայքարի դրսևորումներին, իր ուսումնասիրությունների հիմքում դնում է պատմական-հասարակական-քաղաքական-գրական-մշակութային իրողությունների գնահատումը «կոմկրետ իրադրության» հաշվառմամբ կատարելը: Ընդհանրապես, Ա. Ջաքարյանի գլխավոր «գեները» նոր փաստերն ու փաստաթղթերն են, որոնք էլ նրա ուսումնասիրությունների հիմքերն են: Արձանագրելով իբրև գիտնականի կատարած աշխատանքի նոր արժանիք արխիվային բազմաթիվ նորահայտ և ուշագրավ նյութերի հայտնաբերումն ու տեղին օգտագործումը՝ անհրաժեշտ է նշել հիշյալ բնույթի նյութերի օգտագործման հեղինակի մոտեցման գիտական բնույթը. նա փորձում է ամեն ինչ ստուգել իրականության և այլ փաստաթղթերի հետ համադրումով, համազանց, որ մեծապես բարձրացնում է նրա կատարած ուսումնասիրությունների հավաստիությունը:

Ա. Ջաքարյանը հետագա տարիներին խորացավ հայ իրականության տարբեր կողմերի ուսումնասիրության մեջ, ընդլայնեց իր գիտական հետաքրքրությունների ոլորտը, զբաղվեց մինչ այդ չհետազոտված հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Այսպես, միմիայն նրա պրպտումների արդյունքում մեր հանրությունը ծանոթացավ Չովի. Թումանյանի գլխավորած՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի կրած վնասները քննող հանձնաժողովի գործունեությանը: Պատմության այդ «սպիտակ» էջը եկավ լրացնելու Ա. Ջաքարյանի կազմած «Հայ ժողովրդի կորուստները Առաջին համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու» գիրքը (2005 թ.): Հրապարակված վավերագրերը, որպես սկզբնաղբյուրներ, մեզ համար ունեն ոչ

միայն ճանաչողական, այլև պատմական, քաղաքական, ինչու չէ, նաև գործնական-կիրառական կարևոր նշանակություն:

Ա. Ջաքարյանը հայ մամուլի պատմության քաջատեղյակ մասնագետ է, մասնավորապես հիմնավորապես գիտի XX դարասկզբի մամուլը, դրանում տպագրված բազմաբնույթ և բազմազան նյութերը: Դրա խոսուն վկայություններից են նրա «Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914—1919 թթ.)» աշխատանքը, «Տաճիկ կառավարությունը և իթթիհաթը մարդկության դատարանի առաջ», «Պորուշիկ Ալեքսեյ Կոլմակով: Հայկական պատմական վաշտը» վերնագրերով ժողովածուների կազմումն ու հրատարակումը: 2013 թ. ԳԱԱ-ի 70-ամյա հոբելյանի առթիվ ակադեմիայի խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ հրատարակվեց նրա «Էջեր Մանուկ Աբեղյանի պատմահրապարակախոսական ժառանգությունից» ժողովածուն: Ա. Ջաքարյանի վերջին գործը Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանի 100-ամյակին նվիրված համանուն վերնագրով ժողովածուի կազմումն ու հրատարակումն է (2018 թ.): Ի դեպ, այս ողջ ընթացքում մեր գործընկերը նաև խմբագրել է հինգ տասնյակից ավելի գիտաքաղաքական բնույթի գրքեր:

1989-ից Ա. Ջաքարյանը կատարում է դասախոսական-մանկավարժական աշխատանք Երևանի տարբեր բուհերում: Նա գիտական խորհուրդների անդամ է, եղել է թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս, զեկուցումներով հանդես եկել հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում: 1986 թ. ԽՍՀՄ, ապա Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է:

ԳԱԱ համակարգում ունեցած մեծ ավանդի համար ԳԱԱ նախագահի կողմից Ա. Ջաքարյանը 2013 թ. պարգևատրվել է «Վաստակագրով»:

Լայնախոսությունը, սկզբունքայնությունը, պահանջկոտությունը սեփական անձի և շրջապատի նկատմամբ՝ ահա այս հատկանիշներն են Ա. Ջաքարյան մարդ-քաղաքացու բնութագրիչները: Այս ամենով էլ նա արժանի հարգանք ու հեղինակություն է վաստակել գիտական հասարակության, հասարակական-քաղաքական շրջանակներում և իր միջավայրում:

Շնորհավորելով մեր գործընկերոջ ծննդյան 65-ամյա հոբելյանը՝ նրան ցանկանում ենք քաջառողջություն և հաջողություններ՝ իր բազմաբովանդակ գործունեության մեջ:

**Հրաչյա ԲԱՆՅԱՆ**  
**բանասիրական գիտ. թեկնածու**

## ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

(Ծննդյան 65-ամյակի առթիվ)

Գրականագետ, խմբագիր, հրատարակիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր Անուշավան Ջաքարյանը 65 տարեկան է: Նրա կյանքի ուղին հիմնականում կապված է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի հետ, որտեղ էլ աշխատում է շուրջ 40 տարի:

Լայն ու ընդգրկուն է Ա. Ջաքարյանի կենսագործունեության ոլորտը. խմբագրական-հրատարակչական աշխատանք, պետական ծառայություն, գիտահետազոտական ու մանկավարժական գործունեություն: Աշխատանքային բուն կենսագրությունը սկսել է 1977 թ., երբ աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունում որպես խմբագիր:

1993 թ. հոկտեմբերից Ա. Ջաքարյանն աշխատանքի է փոխադրվել ՀՀ Գերագույն խորհրդի աշխատակազմ. եղել է հրատարակչական բաժնի վարիչ, Աժ գրասենյակի ղեկավար, քարտուղարության պետի տեղակալ, գլխավոր հրատարակիչ:

Ա. Ջաքարյանի կազմակերպչական և գործնական աշխատանքը լիովին դրսևորվել է ՀՀ կառավարության աշխատակազմի նորաստեղծ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» ՊԺԲԸ-ի գործադիր տնօրեն աշխատելիս:

Գիտությունների ազգային ակադեմիայի հետ Ա. Ջաքարյանի կապերն այս ընթացքում չընդհատվեցին. 1999 թ. նա ստանձնեց «Պատմա-բանասիրական

նաժուկական ատենախոսություն»՝ «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը» խորագրով, իսկ 2005 թ. «Ռուս գրագետները և հայ իրականությունը (XX դարի 10-ական թվականներ)» թեմայով պաշտպանեց դոկտորական ատենախոսություն: Ուսումնասիրելով, հայտնաբերելով ու գիտական շրջանառության մեջ դնելով պատկառելի քանակությամբ արխիվային նոր վավերագրեր ու մամուլի տվյալներ՝ նա մոռացության մշուշից հանեց և ընթերցող լայն հասարակությանը ծանոթացրեց ռուս գրական-հասարակական, ռազմական գործիչների մի աստղաբույլի՝ Տ. Օլգենիևի, Վյաչեսլավ Պոլոնսկու, Վասիլի Վոդովոզովի, Ալեքսանդր Կուլեբյակինի, Արիստո Բոյունովի, Վասիլի Կամենսկիի, Բորիս Լազարևսկու, Սերգեյ Ռաֆայելիչի, Պյոտր Սիբիրցկի և այլոց Արևմտյան Հայաստանում ու Անդրկովկասում ծավալած հայամասսատ բուռն գործունեության մանրամասներին:

Իր գիտական այս վաստակով էլ նա, իրավամբ, համարվում է ռուս-հայ գրական, պատմամշակութային կապերի մերօրյա ճանաչված մասնագետներից մեկը: Նրա աշխատությունները շարադրված են հայրենասիրության և Ռուսաստանի հետ բարեկամության ամուր դիրքերից, պատմության տրամադրած հարուստ փաստերով և կուռ տրամաբանությամբ ներկայացված են հայ ժողովրդի՝ ռուս պետականության ու ժողովրդի հետ ունեցած ավանդական կապերի և հարաբերությունների հիմքերը: Միաժամանակ,

հարակից շուկայի շենքը) և շրջկենտրոններում:

1964 թվականին շահագործման հանձնվեց 110կՎ Ադդան-Ստեփանակերտ-Շուշի-Լաչին-Շինուհայր օդային գիծը, միաժամանակ կառուցվեցին 110/35/10կՎ «Ստեփանակերտ», 110/10կՎ «Շուշի», 110/10կՎ «Լիսազոր» և 110/35/10կՎ «Բերձոր» ենթակայանները, իրենց 35 և 10կՎ օդային գծերով: Այս ամենի իրագործումը հնարավորություն ընձեռեց Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում ստեղծել համեմատաբար կայուն էներգետիկ համակարգ, որի բազայի վրա ստեղծվեց Ստեփանակերտի էլեկտրակայանը, այն 2005 թվականին վերանվանվեց «Արցախէներգո» ՓԲԸ:

Ներկայումս ԼՂՀ-ում լայն թափ է ստացել փոքր ՀԷԿ-ի շինարարությունը:


Ներկայումս Արցախում շահագործվում են 16 հիդրոէլեկտրակայաններ, այդ թվում Սարսանգի ՀԷԿ-ը 50 ՄՎտ հզորությամբ և 15 այլ ՀԷԿ-եր 52 ՄՎտ գումարային հզորությամբ: Միայն 2017 թվականին շահագործման է հանձնվել երկու ՀԷԿ:

Աշխատանքներ են տարվում ևս ութ ՀԷԿ-եր կառուցելու համար: Միայն 2017 թվականի առաջին եռամսյակում Արցախում արտադրվել է 83 միլիոն ԿՎտ էլեկտրական էներգիա: Այսքան էներգիա ցերեպային էլեկտրակայաններում արտադրելու համար հարկավոր կլինեն օգտագործել մոտ 25 հազար խորանարդ մետր բնական գազ, շրջակա միջավայր արտանետել ազոտի և ծծմբի օքսիդներ:

Շահագործման է հանձնվել երկրորդ բարձր լարման էլեկտրահաղորդման օդային գիծը, որը իրար է միացնում Սոթ-Հաթերը ենթակայանները:

«Արցախէներգո» ՓԲԸ-ն մի շարք հաջողություններ է գրանցել: 2015թ. համեմատ ավելացել է առաքված էլեկտրաէներգիայի քանակը և բաժանորդների թիվը, իսկ բաշխիչ ցանցերում փաստացի կորուստները նվազել են 0.3 տոկոսով:

2016թ. «Արցախէներգո» ՓԲԸ կողմից առաքված էլեկտ-



«Թրդի-1» ՓՀԷԿ-ի սարքավորումները, Մարտակերտի շրջան

րական էներգիայի քանակը կազմել է 299 միլիոն ԿՎտ: Մեր կողմից կատարված գիտական ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ կարող ենք տնտեսել վառելիք և լուծել էներգետիկ հիմնահարցեր, եթե Ստեփանակերտ քաղաքում կառուցենք միջին հզորության շոգեգազային էլեկտրակայան: Այն հնարավորություն կտա միաժամանակ արտադրել ինչպես էլեկտրական, այնպես էլ ցերեպային էներգիա շենքերի ջեռուցման և տաք ջրամատակարարման համար: Արդյունքում կունենանք վառելիքի խնայողություն, գրում է հեղինակը:

- Աշխատության մեջ ներառված են նաև Արցախի ջրաղացների, ինչպես նաև զագամատակարարման զարգացման հետ կապված հարցեր: 2019թ. կարող ենք հպարտորեն նշել Արցախի էներգետիկայի հիմնադրման 100-ամյակը: Լավագույն նվերը կլինի այս աշխատության տպագրումը առանձին գրքով,- ասում է Ստեփան Պապիկյանը:

## ՀԱՃԵԼԻ ՆՈՐՈՒՅԹ

➤5 Ստորև ներկայացնում ենք մենագրությունից որոշ հատվածներ:

Նախախորհրդային Ղարաբաղի միակ էլեկտրակայանը գտնվում էր Շուշի քաղաքում, որն ուներ ընդամենը 30 կՎտ հզորություն:

Լեռնային Ղարաբաղի տարածքում կա խորհրդային խշխանության տարիներին կառուցված երեք հիդրոէլեկտրակայան: Դրանցից համեմատաբար հինը Ստեփանակերտի ՀԷԿ-ն է, որը գործում էր 1930-ական թվականներից: Այն ուներ փոքր հզորություն և երկար ժամանակ բավարարում էր միայն Ստեփանակերտի պահանջները: 1940-ական թվականներին կառուցվել է մի փոքր հիդրոէլեկտրակայան Մարդակերտի շրջանի Մատաղիս բնակավայրի մոտ: Դրանք այժմ չեն գործում: Համեմատաբար հզորը Սարսանգի ՀԷԿ-ն է, որը կառուցվել է Մարտակերտի շրջանում Թարթառ գետի վրա, շահագործման է հանձնվել 1970-ական թվականներին: Հզորությունը կազմում է 50 հազար կՎտ: 1988-1993թթ. Ադրբեյջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով Սարսանգի ՀԷԿ-ը նույնպես չէր գործում: Այժմ այն լրիվ հզորությամբ վերագործարկված է: 1940թ. ԼՂՀ-ում արտադրվել է 1.51 մլն կՎտ էլեկտրաէներգիա, իսկ 1988թ.՝ 57.8 մլն կՎտ:

1923 թվականին Ստեփանակերտի Արմենական քաղամասում տեղադրված 35կՎտ հզորության դիզելային գեներատորը էլեկտրական լամպ վառեց Ստեփանակերտում: 1930 թվականին թողարկվեց Կարկառ գետի վրա կառուցված 480կՎտ հզորության հիդրոէլեկտրակայանը: Նրանց հաջորդեցին փոքր հզորության դիզելային էլեկտրակայանների կառուցումը Ստեփանակերտում (այժմյան Քաղցամցին



«Որտե՞ղ է եղել», - իմ մասին հարցնում էին բարեկամիս: Սա թվարկում էր: «Պետք է Գեղարդ տանել»,- լսելով նրա պատասխանը, միշտ և անառարկելիորեն պնդում էին բոլորը: Այս միահամուռությունը դավադրություն էր հիշեցնում: Ի՞նչ է Գեղարդը: Որտե՞ղ է Գեղարդը: Ուսերն էին թոթվում: Ոչ ոք չէր փորձում բացատրել, ինքը կտեսնես:

Ինձ համար Գեղարդը սոսկ անուն էր, համառ, նույնիսկ աներես մի բառ: Դրա մեջ, ինչևէ, յուրօրինակ երաշխիք կար: Վերջապես ես տեսա Գեղարդը:

...Ես, կենտրոնում կանգնած, գլուխս վեր էի պարզել: Այնտեղ, իմ գլխավերևում, մի կապույտ, կլոր շրջանակ կար, և լույսը հենց այնտեղից էր ընկնում: Այնտեղ երկինքն էր: «Նա այնտեղից է սկսել... այդ անցքից Նա փորել է ամբողջ տաճարը»- մանկան շշուկով ասաց ինձ բարեկամս: Եվ թեկուզ ես խորը ներքևում էի կանգնած, մինչև հիմա էլ ներքին հայացքով այդ տաճարը տեսնում եմ վերից վար, ինչպես, հավանաբար, ՆԱ է տեսել՝ այնտեղ, ժայռի վրա կանգնած, երբ տաճարը դեռևս չկար նրա ոտքերի տակ...

Կապույտ շրջանակից աստիճանաբար լայնանալով, իջնում է թասած կամարը և, հասնելով կիսառկորտին, կտրվում է ու կախվում ձեր գլխին՝ կատարյալ շրջանագծի ձևով: Կիսառկորտի շրջափողի ուղղությամբ իջնում են չորս սյուներ և խոր ներքևում, հասնելով ինձ, կորչում այն սալի մեջ, որի վրա ես կանգնած եմ: Կամարը մնջում է, հենված չորս սյուների՝ այնքան գեղակերտ ու կատարյալ, որ ես, մասնագիտական գիտելիքներ չունենալով, հրաժարվում եմ նկարագրել: Կամարի ներքին պոնտիկ, շրջանագծի յուրաքանչյուր քառորդ մասից, չորս կողմի վրա, չորս կլորավուն ծաղկաթերթի նման ընդլայնվում է տաճարի դատարկ մարմինը: Այնտեղ արդեն՝ կենտրոնից հեռու ընկած ծայրերում, պատերը ուղիղ գծով կախվում են, չորս ծաղկաթերթ ուրվանկարելով հիմքի վրա, որտեղ ես կանգնած եմ. դարձյալ նույն հայկական խաչ-ծաղիկը...

**Մեր թերթի նախորդ համարում մենք անսահման ափսոսանքով հաղորդեցինք Անդրեյ Բիտովի մահվան լուրը: Անդրեյ Բիտովը հայ ժողովրդին սիրելի անուն է դարձել անցած դարի 60-ական թվականների վերջերին, երբ մեր մամուլը տպագրեց նրա «Հայաստանի դասերը» ուղեգրությունը: Երբ այն հրատարակվեց նաև բազմաթիվ լեզուներով, քննադատությունը այն որակեց որպես յուրահատուկ սիմֆոնիա Հայաստանի մասին: Անդրեյ Բիտովի կերտած Հայաստանը չափազանց նման է իրականին:**

**Այսօր մենք հրապարակում ենք պատմական Գեղարդին նվիրված հատվածը:**

## ԳԵՂԱՐԴ



Պատի աղեղները կորչում են աղջամուղջի մեջ, սյուները վեր խոյանալով խառնվում են կամարին, որի գագաթից ինձ էր նայում երկնքի կապույտ, կլոր աչքը: Եվ այդ ամբողջը ժայռի մեջ էր, մի ամբողջական քարից: Ձևերը այնքան ներդաշնակ են, միակ ու բացարձակ: Այդպիսի կատարելություն երբեք չէի տեսել և չեմ տեսնի: «Համճարեղ» բառը ցածր է հնչում՝ որոշելու համար այն, ինչ ես տեսա:

ՆԱ... ահա այն անցքից... վերից վար փորել է... այս ամբողջ տաճարը: Ո՞վ է ՆԱ: Անունը չկա և չի էլ կարող լինել թեև նա մենակ է եղել: Աստված է: Աստված՝ այդ անանուն մարդու մեջ, ժայռից հանել է ավերորդ քարը, և մնացել է տաճարը: Նա հավատացյալ մարդ է եղել, Աստծու պես հավատացյալ: Հավատից բացի ուրիշ ոչինչ չի կարող ստեղծել այսպիսի բան: Անհավատը չէր կարող, ֆանատիկոսը կկոտրվեր: Մարդկային հավատի հրաշք՝ ահա թե ինչ է Գեղարդը:

Տաճարում ոչ մի ամրակ չկա:

Տաճարն արդեն եղել է այդ ժայռի մեջ, անհրաժեշտ էր միայն փչել-հանել այն-

տեղից քարը... Ոչ մի մեքենա չէր կարող անել այդ բանը: Միայն ձեռքերով, միայն եղունգներով կարելի էր հատիկ առ հատիկ ճանկել-փորել այդ տաճարը: Ոչ մի սիսալ, ոչ մի ճաք չէր կարող լինել այդ ժայռում, որովհետև այնտեղ տաճար կար: Ոչ մի գծագիր, ոչ մի հատակագիծ, որովհետև այնտեղ հենց այդ տաճարն էր, այդ ձևերը և այդ եզրագծերը: ՆԱ հավատում էր այդ միակին, տեսնում այդ միակը, ահա և բոլորը: Նա կարող էր և՛ չաղութել, և՛ չզնալ եկեղեցի, և՛ չիմանալ Աստծո խոսքը, նրա մեջ Աստված կար: Նա հատակագիծ չուներ, գծագրեր չուներ. ՆԱ իր աղեղի մեջ այնպիսի ազնիվ և անաղարտ կամարներ ուներ, որ դրանք բերեց այստեղ, և ոչ մի սիսալ չէր կարող լինել: Նրա ուղեղը դարձավ ապագա տաճարի պատկերն ու նմանությունը, իսկ տաճարը՝ Աստծո պատկերն էր:

Այդ հիմա է, որ ես դիմում եմ թվատ բառերի տրամաբանությանը, ուրիշ ելք չունեմ: Իսկ այն ժամանակ ես բառեր չունեի և չէի կարող ունենալ և չպետք է ունենայի, ես չկայի: Ես նմանվել էի ՆՐԱՆ, նույն համրությունը, ԵՍԻ նույն

բացակայությունը, նույն հավատն էր ապրում իմ մեջ, որովհետև ես ամփոփվել էի ՆՐԱ ազնիվ և անաղարտ ուղեղում, ՆՐԱ հավատի մեջ, ՆՐԱ ամբողջական ու եզակի մտքի մեջ, որտեղ ուրիշ այլ միտք արդեն չէր կարող գոյություն ունենալ: Դա ՆՐԱ անմահությունն էր:

Բայց մեր անկատար հոգին երկար չէր կարող դիմանալ դրան: Մենք վերջապես իրար նայեցինք: Եվ իմ բարեկամները հիշելով, որ ինձ՝ որպես հյուրի, պետք է ցույց տալ բոլորը, խորհրդավոր կերպով ցրվեցին տարբեր կողմերի վրա, ինձ թողնելով կենտրոնում, և կանգ առան յուրաքանչյուրը մի սյան մոտ: Եվ սկսեցին երգել: Դա հին հայկական մեղեդի էր, դանդաղ ու թախծոտ: Նրանց ձայները բազմապատիկ արձագանքվում էին, և ամբողջ ժայռն էր դողանջում զանգի պես:

Մենք հենց քարե զանգի մեջ էինք, նրա զանգուլակներն էինք: Եվ այդ բազմաձայնությունը նույնքան բնականոն էր ու ներդաշնակ, որքան և տաճարի գծերը, և այլ կերպ չէր կարող լինել: Այստեղ և՛ գիծը, և՛ հնչյունը ենթարկվում էին նույն օրենքին... Մի՞թե մեր ճյուղավորված գիտելիքները այն եզակի, միակ Օրենքի իմացության կորուստը չեն: Երբ չկա այդ Օրենքը, արդեն վերջ, ճարտարապետություն, գծագրեր, կանոններ, հաշվարկներ, ֆիզիկա, ակուստիկա, մեքենաներ... Մեր կորցրած միակ ու ամբողջական օրենքի փլատակների մրջնային կատարելագործություն...

Երգը գեղեցիկ էր, բայց երգից հետո մենք արդեն կարող էինք անմիջական ծանրաբեռնվածությունից հոգնած մեր հոգիները դուրս բերել Աստծո լույսին:

... Ոչնչով չխախտված, սովորական, պարզ ու հասարակ ժայռ: Եվ նույնպիսի եկեղեցի, արտաքինից՝ եկեղեցու աշխարհիկ մարմին... Բայց երբ աչքերս բարձրացրի և տեսա գեղեցիկ այն ժայռերը, որ այնպես խստաշունչ վեր էին խոյանում և այնտեղ՝ կապույտի մեջ քարանուն սլաքած, ինձ վերստին գարմանք պատճառեց այն նույն մեծ նմանությունը: Այժմ դա հետադարձ էր: Այժմ այդ ժայռերն էին նման տաճարին, որից ես նոր էի դուրս եկել: Տաճարը ավելի նախաստեղծ էր, քան բնությունը, և այժմ բնությունն էր նմանվում նրան: Այդ ամբողջ հրաշալի վայրը և երկինքը նման էին հենց նոր իմ տեսած արարչագործությանը և արարչագործություն էր, որ կար:

Այստեղ ամեն ինչ, բոլորը արտացոլվելով, կրկնում էին միմյանց, հաստատելով գոյող ձևերի ներդաշնակությունն ու միասնությունը, և երբ մենք փորձեցինք պարզել, թե ինչու՞ն է այդ միասնությունը, մեր հայացքը սողաց դեպի վեր, դեպի վեր, որպեսզի կանգ առնի ինչ-որ բանի վրա՝ որպես նմանության կենտրոնի, և ոչ մի տեղ չկարողացավ կանգ առնել, ու մենք այլևս նայելու տեղ չունեինք, երկնքից բացի...

Այս տաճարում ժամասացությունը երբեք չի դադարել, յուրաքանչյուր քարի վրա կարելի է մոռ վառել:

## ՄԵՆՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

- Ամեն մի հայ, առանձին վերցրած, առյուծ է, ինչպես և խելքով ու դատողությամբ՝ իսկա: Բայց ընկերական ոգու բացակայությունը, խմբովին գործելիս, ջլատում է նրա ուժերը: Ձգեցեք մենակ հային վտանգների փորձրիկի մեջ, նա արժանավորապես կպաշտպանի յուր գլուխը: Բայց խմբեցեք մի քանի հայեր միասին, և նրանք պաշտպանվելու կամ հարձակվելու փոխարեն, կսկսեն խորհել, մտածել, հակաճառել և, վերջապես, թշնամուն թողած՝ միմյանց միա ուտել: Այո, անհատականությունը հայի գլխավոր թշնամին է, նա տարածված է մեր բոլոր դասակարգերի ու բոլոր գործերի մեջ: Արդյոք մեր ազգի մտավոր առաջնորդները կկարողանա՞ն մի փոքր հիմարացնել ԱՆՇԱՆՆԻՆ և խելքացնել ԸՆԿԵՐԱԿԱՆ ԸՆՅԻՆ: Եթե այդ եղավ, մենք կարող ենք ապագա ունենալ, եթե ոչ՝ մենք կորած ենք, կամ կապրենք այնպիսի ամոթալի կյանքով, ինչպես ապրել ենք մինչև այսօր:

ՐԱՖԳԻ




## ԸԵՏԱԶՐԶԻՐԷ

## «Չանե-4» ապարատը մարդկության պատմության մեջ առաջին կենսաբանական գիտափորձն է կատարել Լուսնի վրա

Չինական «Չանե-4» ապարատը, որն ավելի վաղ փափուկ վայրէջք է կատարել Լուսնի հակառակ կողմում, հաջողությամբ իրականացրել է մարդկության պատմության մեջ առաջին կենսաբանական գիտափորձը Լուսնի մակերևույթին: Այդ մասին հայտնել է Չինաստանի կենտրոնական հեռուստատեսությունը:

Հեռուստաալիքի տվյալներով՝ ապարատը հունվարի 15-ին ուղարկել է կենսաբանական փորձարկային բեռնվածության լուսանկարներ:

Լուսանկարները ցույց են տալիս, որ բամբակենու առկա սերմերում արդեն բողբոջներ են հայտնվել: Դա նշանակում է, որ «Չանե-4»-ն իրականացրել է մարդկության պատմության մեջ առաջին կենսաբանական գիտափորձը Լուսնի մակերևույթին, հաղորդել է ՌԻԱ Նովոստին:



### Ինչպես առաջացավ «Արլաս» հասկացությունը

Աշխարհագրական քարտեզների հավաքածուն ԱՏԼԱՍ անվանելու սովորույթը սկիզբ է առել 1602 թվականից, երբ հրատարակվեց «Ատլաս կամ կոսմոգրաֆիական դատողություններ աշխարհի ստեղծման և տիեզերքի արարման մասին» աշխատությունը: Այն ֆլամանդական նշանավոր քարտեզագետ Գ. Մերկատորի վերջին և հետմահու հրատարակված աշխատությունն էր՝ բաղկացած 111 քարտեզներից: Մերկատորը վերհիշում է առասպելը այն մասին, թե ինչպես տիտանները ապստամբեցին Ջևա գերագույն Աստծո դեմ և պարտություն կրեցին: Տիտաններից մեկը՝ Ատլասը, Ջևայի հրամանով դատապարտվեց՝ հավերժ իր ուսերին պահել երկնականարը: Սրա նմանողությամբ էլ քարտեզների ժողովածուն, որը ներկայացնում է երկրագնդի ամբողջ մակերևույթը, և որը կարծես իր ուսերին է պահում ողջ երկնականարը, որոշվեց անվանել Ատլաս:

Ահա այն բառերը, որ գրված են մեծառոյտ Մերկատորի դամբանաքարի վրա. «Անցորդ, ով էլ որ դու լինես, մի՛ վախեցիր, թե այստեղ թաղված Մերկատորի վրայի հողաթունքը ճնշում է նրան իր ծանրությամբ: Ձի ողջ հողագունդը բեռ չէ մարդու համար, որը Ատլասի նման իր ուսերին էր պահում նրա ողջ ծանրությունը»:

### Մեղրը և կարմիր կծու պղպեղը ձեզ կպահպանեն գրիպից

Ըստ տիբեթյան բժշկության գրիպը (հատկապես երբ այն անցկացնում եք ոտքի վրա) վտանգավոր է նախ և առաջ օրգանիզմի հավասարակշռությունը համակարգող օրգանների համար: Տիբեթում այն կոչում են «բադ-կան», որ թարգմանաբար նշանակում է «СЛАЗЬ», և որը պատասխանատու է օրգանիզմի դիմադրողականության համար:

Տիբեթյան բժշկության մեջ «բադ-կան»-ը ունի «սառնության» բնույթ: Սրա համար էլ օրգանիզմի տարբեր օղակների հավասարակշռության խաթարումները կանխելու համար պետք է օգտագործել ուտելիքներ, որոնք ունեն տաքացնող հատկություն:

Այդպիսի մթերքներից լավագույններից են մեղրը և կարմիր կծու պղպեղը (տաքտեղը): Կարմիր պղպեղը ունի անոթալայնիչ և հակաբորբոքային հատկություն: Բացի այդ՝ այն C վիտամինների աղբյուր է: Մեղրը հակաբորբոքային և բուժիչ միջոց է մրսածության պարագայում: «Այս երկու ուտելիքները լավ ջերմացնում են օրգանիզմը, բարձրացնում նրա էներգետիկան և դրանով իսկ բարձրացնում օրգանիզմի դիմադրողականությունը և ավելի կայուն դարձնում մարդու կենսական օրգանների հավասարակշռությունը»:

Սույն միջոցը ավելի գործոն է և կարևոր գրիպի համաճարակի և տարվա ցուրտ եղանակների ժամանակ: Այդ ժամանակ մեղրը և կարմիր կծու պղպեղը առողջության պահպանման հրաշալի միջոց են: Ավելի արդյունավետ է, երբ այն օգտագործում են լուծված վիճակում:

Նախազգուշական ուժեղ միջոց է այդ մթերքների օգտագործումը սպիրտային լուծույթի տեսքով, քանի որ սպիրտը ընդունակ է այդ մթերքներից կորզել օգտակար հատկությունները: Մինչդեռ ջուրը անկարող է դա անել:

Ուրեմն, երբ դուք հիվանդ եք կամ կա վարակվելու ակնհայտ վտանգ, ապա պետք է խմել սպիրտի մեջ լուծված կարմիր կծու պղպեղի և մեղրի թուրմ: Օրական 20-ից 30 գրամ:

### Բջջային հեռախոսները և հղի կանայք

Փաստացի տվյալների բացակայությունը, որ միանշանակ ապացուցում է, թե բջջային հեռախոսները վնաս են առողջությանը, օգտագործել դրանք, թե ոչ, ամեն մեկը յուրովի է որոշում: Սակայն, ինչպես հարցումներն են պարզել, մասնագետների գերակշռող մեծամասնությունը համակարծիք է մեկ հարցում. լավ կլինի, որ հղիության ընթացքում կանայք չօգտվեն բջջային հեռախոսներից (բացառությունները չհաշված): Կա նաև սրա բացատրությունը:

Հաստատված է, որ էլեկտրամագնիսական ճառագայթները կարող են աղետալի հետևանքներ ունենալ զարգացող պտղի վրա:

Թռչունների ճտերի, մկների և ճագարների վրա կատարված փորձերը ապացուցել են, որ էլեկտրամագնիսական դաշտի թույլ մակարդակները՝ զուգորդված բջջային ճառագայթման հետ, բացասաբար են անդրադառնում, ազդում սաղմի կենտրոնական նյարդային համակարգի ծնավորման վրա:

Ելնելով սրանից՝ առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, չունենալով գիտական հիմնավոր ապացույցներ, հռչակել է նախազգուշական քաղաքականություն և առաջարկել է հղի կանանց՝ չօգտագործել բջջային հեռախոսներ:



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հայտարարում է մրցույթ «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 21-րդ կետի, կազմակերպության տնօրենի թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները, որոնք կարող են առաջադրել միայն մեկ թեկնածու: Տնօրենի թեկնածուն պետք է ունենա գիտական աստիճան, ընտրության պահին լինի 65 տարեկանից ցածր տարիքի, ունենա գիտակազմակերպչական աշխատանքի փորձ, մասնագիտական ուղղվածությամբ պետք է համապատասխանի գիտական կազմակերպության հիմնական գիտական ուղղություններից մեկին:

Առաջադրված թեկնածուները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Առաջադրումը հաստատող փաստաթուղթ
3. Լուսանկար
4. Քաղվածք աշխատանքային գրքույկից
5. Ինքնակենսագրություն
6. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն
7. Գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն
8. Գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում)
9. Հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ
10. Կարգերի հաշվառման անձնական թերթիկ
11. Տեղեկանք մշտական բնակության վայրից
12. Բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել)
13. Կազմակերպության զարգացման ծրագիր
14. Անձնագրի և սոց. քարտի պատճենները

Թեկնածուների հիմնավորված առաջադրումները վերոնշյալ փաստաթղթերի հետ մեկ ամսվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից) խնդրվում է ներկայացնել ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք հետևյալ հասցեով՝ 0019, Երևան, Մարշալ Բաղդամյան պող., 24, հեռ. 52-13-62:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

**ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հայտարարում է մրցույթ ինստիտուտի բառարանագրության, բարբառագիտության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, հայոց լեզվի պատմության բաժինների վարիչների թափուր տեղերի համար**

Դիմողները պետք է ունենան գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու հմտություն: Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում,
- բ) լուսանկար,
- գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,

է) կարգերի հաշվառման անձնական թերթիկ, ը) տեղեկանք մշտական բնակության վայրի, թ) հրատարակված աշխատանքների ցանկ, ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),

ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 060-62-35-77:

*Գիտություն*

**Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**  
Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ,  
հեռ. 56-80-14, 077 31 63 76

**Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:**  
**Ստորագրված է տպագրության՝ 23.01.2019 թ.:**

"ГИТУТИОН" ("Найка") газета НАН РА